ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- 2021 թվականի №--Ա
ք. Երևան

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի ապրիլի 19-ի №124Ա որոշման 2-րդ կետով «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) պարտավորեցվել է որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով թույլատրել միանալ ջրային համակարգին կամ պայմանագրի հիման վրա թույլատրել դրա օգտագործումը՝ այդ մասին տեղեկացնելով Հանձնաժողովին,

բ) Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 19-ի №124Ա որոշման դեմ Ընկերությունը 2021 թվականի մայիսի 4-ին ներկայացրել է վարչական բողոք, որը մերժվել է Հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 23-ի №248Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում),

գ) Որոշման 2-րդ կետով Ընկերությունը պարտավորեցվել է որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով թույլատրել միանալ ջրային համակարգին կամ պայմանագրի հիման վրա թույլատրել դրա օգտագործումը՝ այդ մասին տեղեկացնելով Հանձնաժողովին, ինչը չի կատարվել,

դ) Ընկերությունը 2021 թվականի հուլիսի 9-ի №ՄՇ/20643 գրությամբ հայտնել է, որ «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Արզական-Երևան ջրատարին միանալու կամ պայմանագրի հիման վրա դրա

օգտագործումը թույլատրելու վերաբերյալ Ընկերությունը տարբեր ժամանակահատվածներում ներկայացրել է իր դիրքորոշումը՝ համապատասխան հիմնավորումներով, առարկություններով՝ առկա տեխնիկական խնդիրների պարզաբանմամբ: Ընկերության դիրքորոշումը բխում է նաև նրանից, որ գույքի սեփականատերը՝ պետությունը, ի դեմս իրավասու մարմինների, հավանություն է տվել Վեոլիա Գրուպի կողմից էներգետիկայի բնագավառում ներդրումներ կատարելու հեռանկարային ծրագրին, որը նպատակ ունի ջրամատակարարման համակարգն առավելագույնս դարձնել ինքնաբավ և փոքր հիդրոէլեկտրակայանների միջոցով արտադրված էլեկտրաէներգիան օգտագործել սեփական կարիքների համար՝ զսպելով մատուցվող ծառայությունների սակագների բարձրացումը: Միաժամանակ, քանի որ Ընկերությունը հանդիսանում է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը շահագործող անձ, առանց գույքի սեփականատիրոջ՝ վարձատուի համաձայնության, չի կարող այդ համակարգերն օգտագործման կամ միացման տրամադրել: Տվյալ դեպքում առկա չէ վարձատուի՝ ի դեմս Ջրային կոմիտեի համաձայնությունը, ուստի և նման պայմաններում առանց վարձատուի հետ Հայաստանի Հանրապետության կառավարության, Ընկերության և «Վեոլիա Օ-Կոմպանի Ժեներալ դեզ Օ» ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրից (այսուհետ՝ Վարձակալության պայմանագիր) բխող տարաբնույթ հարցերի պարզաբանման և համաձայնեցման հնարավոր չէ ապահովել Որոշման պահանջի կատարումը: Ելնելով նշվածից՝ Ընկերությունն առաջարկել է Որոշման 2-րդ կետի կատարմանն անդրադառնալ վարձատուի համապատասխան համաձայնության ստացումից հետո,

ե) Հանձնաժողովը սույն թվականի հուլիսի 14-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ 2021 թվականի հունիսի 23-ի №248Ա որոշման 2-րդ կետով սահմանված պարտավորության խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, ինչի վերաբերյալ ծանուցվել է №ԳԲ/34.1-Մ2-5/2364-2021 գրությամբ,

զ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2021 թվականի հուլիսի 20-ի №ՄՇ/21810 գրությամբ, վերաշարադրելով 2021 թվականի հուլիսի 9-ի №ՄՇ/20643 գրությամբ հայտնած դիրքորոշումը, վկայակոչելով Հայաստանի

Հանրապետուսյան ջրային օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և Վարձակալության պայմանագրի 4-րդ հոդվածը, վերստին հայտնել է, որ Որոշման 2-րդ կետի կատարումն անհնար է եղել կատարել Ջրային կոմիտեի համաձայնության բացակայության պատճառով: Նշվածից ելնելով էլ՝ առաջարկել է «Վարչարարության հիմունքների վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա կարճել վարչական վարույթը, իսկ Որոշման 2-րդ կետի կատարմանն անդրադառնալ վարձատուից համապատասխան համաձայնությունը ստանալուց հետո,

է) Վարձակալության պայմանագրի՝

- ԸՊ 4.1(2) կետի համաձայն՝ վարձակալը, այսինքն Ընկերությունը, պարտավորվում է փոքր հիդրոէլեկտրակայաններին թույլատրել օգտվել ջրային համակարգերից Լիցենզիայով սահմանված դրույթների համաձայն (Վարձակալության պայմանագրի 1.1 կետով Լիցենզիան բնորոշված է որպես Հանձնաժողովի որոշմամբ վարձակալին տրամադրված փաստաթուղթ, որով սահմանված են խմելու ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզավորված անձի իրավունքը և պարտականությունը).
- ԸՊ 7.1(1) կետի ժամկետի ընթացքում և ծառայությունների մատուցման նպատակով միայն վարձակալն ունի գույքի օգտագործման իրավունք՝ բացառությամբ ԸՊ 4.1(2) և ԸՊ 4.5 կետերով նախատեսված դեպքերի,

ը) Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ԼՋ №0001 լիցենզիայի (այսուհետ՝ ԼՋ №0001 լիցենզիա) պայմանների 11-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը տեխնիկական հնարավորությունների դեպքում պարտավոր է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման կամ շահագործման նպատակով թույլատրել միանալ ջրային համակարգին կամ պայմանագրի հիման վրա թույլատրել դրա օգտագործումը, եթե այն չի վտանգում ծառայությունների մատուցմանը, չի հանգեցնում լիցենզիայի պայմանների կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմատիվ պահանջների խախտմանը: Լիցենզավորված անձի կողմից սահմանված՝ ջրային համակարգին միացման պահանջները պետք է լինեն հրապարակային, հիմնավոր և ոչ խտրական,

թ) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշման 2-րդ կետի պահանջը՝ Հանձնաժողովի կողմից արդեն 2-րդ անգամ սահմանված ժամկետում ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետին համապատասխան «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը չտրամադրելով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միացման կամ դրա օգտագործման թույլտվություն: Մասնավորապես՝ հիշյալ իրավակարգավորման համաձայն՝ Ընկերության կողմից «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միացման կամ դրա օգտագործման թույլատարումը կարող էր մերժվել միայն այն պարագայում, եթե առկա չէ տեխնիկական հնարավորություն, եթե այն վտանգում է ծառայությունների մատուցմանը, հանգեցնում է լիցենզիայի պայմանների կամ օրենսդրությամբ սահմանված նորմատիվ պահանջների խախտմանը: Մինչդեռ Ընկերությունը, ինչպես նախքան վարչական վարույթի հարուցումը, այնպես էլ դրանից հետո Հանձնաժողովին ուղղված իր որևէ գրությամբ չի հիմնավորել վերը նշված հանգամանքների առկայությունը: Ընդհակառակը, Ընկերության կողմից դեռևս սույն թվականի փետրվար ամսից Հանձնաժողովին ներկայացվել են իրարամերժ և չհիմնավորված պատճառաբանություններ, նախ նույն ջրատարի նույն հատվածում փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու իր մտադրության մասին, ապա այդ մտադրության և ենթադրյալ տեխնիկական անհնարինության մասին:

Անդրադառնալով սույն վարչական վարույթի շրջանակում Ընկերության ներկայացրած փաստարկին՝ առ այն, որ Որոշման 2-րդ կետի կատարումն անհնար է եղել կատարել Ջրային կոմիտեի համաձայնության բացակայության պատճառով, Հանձնաժողովը փաստում է, որ այն անհիմն է, քանզի Վարձակալության պայմանագրով (ԸՊ 4.1(2) կետով) գույքի սեփականատերը՝ վարձատուն՝ ի դեմս Ջրային կոմիտեի, արդեն իսկ տվել է իր համաձայնությունը, որպեսզի Ընկերությունը փոքր հիդրոէլեկտրակայաններին թույլատրի օգտվել ջրային համակարգերից ԼՋ№0001 լիցենզիայով սահմանված դրույթների համաձայն: Ընդ որում ԼՋ№0001 լիցենզիայի պայմանները նախապես համաձայնեցվել են նաև Ջրային կոմիտեի հետ, որը քննարկվող դրույթի առնչությամբ որևէ առարկություն չի ներկայացրել: Նշվածից բխում է, որ փոքր հիդրոէլեկտրակայաններին օգտագործման կամ միացման

թույլտվությունների տրամադրման բոլոր դեպքերում արդեն իսկ առկա է վարձատուի համաձայնությունը, եթե այն իրականացվում է ԼՋ№0001 լիցենզիայի պայմաններին համապատասխան և յուրաքանչյուր առանձին դեպքի համար կրկնակի համաձայնություն չի պահանջվում: Ավելին, հարկ է նաև արձանագրել, որ հարցի առնչությամբ իրականացված ողջ վարչարարության, այդ թվում՝ դրա արդյունքում ընդունված որոշումների մասին, տեղեկացված է եղել նաև Ջրային կոմիտեն, որը երբևէ պաշտոնապես չի հայտնել հարցի առնչությամբ իր համաձայնության անհրաժեշտության և դրա տրամադրման հետ կապված խնդիրների մասին: Հարկ է նաև փաստել, որ Ընկերությունը, Որոշման 2-րդ կետի պահանջի չկատարումը պայմանավորելով Ջրային կոմիտեի կողմից համապատասխան համաձայնության չտրամադրման հանգամանքով, որևէ կերպ չի հիմնավորել նաև, որ ձեռնարկել է այդ պահանջի կատարմանն ուղղված իրենից կախված բոլոր միջոցները, այդ թվում՝ պայմանագրի կամ թույլտվության նախագծի կազմում, այն Ջրային կոմիտեի կարծիքին ներկայացում և այլն:

Վերոշարադրյալ իրավական և փաստական հիմնավորումների ուժով Հանձնաժողովը գտնում է, որ «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միացման կամ դրա օգտագործման թույլտվության չտրամադրման օբյեկտիվ հիմքերը բացակայում են, հիշյալ թույլտվությունն առկա պայմաններում ենթակա է տրամադրման, սույն վարչական վարույթի կարճման հիմքերը բացակայում են և Որոշման 2-րդ կետի պահանջի խախտման՝ Հանձնաժողովի կողմից արդեն 2-րդ անգամ սահմանված ժամկետում ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետին համապատասխան «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միացման կամ դրա օգտագործման թույլտվության չտրամադրման համար Ընկերության նկատմամբ ենթակա է կիրառման տուգանք, և

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 3-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման 2-րդ կետի խախտման համար Ընկերությանը տուգանել հինգ միլիոն դրամի չափով:

2. Ընկերությանը՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկ ամսվա ընթացքում «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով թույլատրել միանալ ջրային համակարգին և շահագործման նպատակով թույլատրել միանալ ջրային համակարգին կամ պայմանագրի հիման վրա թույլատրել դրա օգտագործումը՝ այդ մասին տեղեկացնելով Հանձնաժողովին:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- օգոստոսի 2021թ.